Հաղպատ

Մակերես՝ 15.28 կմ^2

Բնակչություն՝ 767

Հաղպատ գյուղը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքում՝ Լոռվա մարզում:
Գյուղի անունը եղել է Հաղբատ, հետագայում ընդհանրական է դարձել Հաղպատ ձևը: Հաղբատ անունը կազմված է Հաղբ և ատ արմատներից: Հաղբ նշանակում է որոգայթ, թակարդ, իսկ ատ՝ ատել բառի բառարմատն է: Ստացվում է՝ ատում եմ որոգայթը, ծուղակը, թակարդը: Այս անունը վանքին տվել են Բյուզանդիայի Ռոմանոս կայսրից հալածված կրոնավորները:
Հաղպատը որպես բնակավայր թվագրվում է մոտավորապես մթա 8-7-րդ դարերից:
Միջնադարում Հաղպատը անվանվել է նաև մայրաքաղաք, բայց ոչ թե մարդաշատ կամ քաղաքական տեսակետից, այլ որպես հոգևոր մեծ կենտրոն: Վանքն ունեցել է 500 հոգևորական:
1820-28 թթ Եփրեմ կաթողիկոսի օրոք Մայր Աթոռ Էջմիածնից տեղափոխվել է Հաղպատ:
Հաղպատն աշխարհին հայտնի է իր պատմաճարտարապետական կառույցներով՝ Հաղպատավանքով, որը եզակի կառույց է և գրանցված է ՅՈՒՆԵՍԿՈ-ի ցուցակի մեջ:
Հաղպատավանքը հիմնադրվել է 976 թ. Բագրատունյաց Աշոտ ողորմածի կնոջ՝ Խոսրովանուշ թագուհու միջոցներով:
Հաղպատը ծովի մակերևույթից բարձր է 950 մետր: Կլիման միապաղաղ է, ամռանը շոգ չէ, իսկ ձմռանը՝ առանց սառնամանիքի, օդն ու ջուրն էլ շատ առողջարար են:
Արևմտյան կողմից գյուղը երիզված է անդնդախոր ձորերով, իսկ արևելյան կողմից շրջափակված է Սուրբլիս և Տերունական սարերով, որոնք բերդ են հանդիսացել ասպատակողների համար:
Հաղպատը բազմաթիվ անգամ է ենթարկվել արհավիրքների, բազմաթիվ անգամ ամայացել է, դատարկվել, բայց նորից է բնակեցվել, վերականգնվել:
Ներկայիս հաղպատցիների նախնիները Արցախի Խաչեն գավառից են:
Գյուղն ունի 270 ծուխ, 767 բնակիչ: